## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## *ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-06/14 ծածկագրով պարզեցված ընթացակարգի արդյունքում 2014թ-ի դեկտեմբերի 23-ին կնքված պայմանագրում 2014թ-ի դեկտեմբերի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ : ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի ընթացիկ շինարարական աշխատանքների, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքի ընթացիկ շինարարական աշխատանքների և ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Հրազդան քաղաքի շենքի գլխավոր մուտքի վիտրաժների փոխումը նոր ալյումինե վիտրաժներով աշխատանքների կատարումն ապահովելու համար շինարարական աշխատանքների կատարման ընթացքում առաջացել է լրացուցիչ շինարարական աշխատանքների կատարման անհրաժեշտություն, ինչը նախատեսված չի եղել սկզբնական նախագծա-նախահաշվային փաստաթղթերով, ինչպես նաև պայմանագրի առարկա հանդիսացող աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի՝

-ընդհանուր արժեքը՝ 5 692 351 ՀՀ դրամի փոխարեն սահմանվել է 6 001 882 ՀՀ դրամ.

-պայմանագրի առարկա հանդիսացող աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է՝ սահմանվելով 2014թ. դեկտեմբերի 30-ը ներառյալ.

-պայմանագրի N2 և N3 հավելվածներով սահմանված աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը և վճարման ժամանակացույցը հաստատվել են նոր խմբագրությամբ.

-պայմանագիրը լրացվել է նոր հավելվածով՝ լրացուցիչ շինարարական աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվներով:

Փոփոխության հիմնավորում: Շինարարական աշխատանքների ամբողջական կատարում: Պայմանագրում փոփոխությունները կատարվել են հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետը և ՀՀ կառավարության 10/02/11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 71-րդ կետի 4-րդ ենթակետը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գրիգոր Ներսիսյանին:

Հեռախոս՝ 010-511-788:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝ -:

Պատվիրատու՝ *«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*